

секретарь—ենթ-քարտուղար, искусственный эпосъ, գեղարվեստական վիպասանություն, расправа съ парламентомъ не заставила себя ждать, խորհրդարանի պատահական երկար չը տեղ, завершилъ дѣло, կատարելագործող գործը, инженерная часть, ճարտարագիտական բաժին, дѣльцы, գործիչներ, около тысячаго года, հարյուրավոր թուականներում, дѣловитость, գործունեություն, стѣснительная повинности, սահմանափակող հարկեր, осмотрѣться շրջակայացի դառնալ, жизненный, առօրյա, несообразность, անկարգություն, мірозаніе, աշխարհագրություն, злоупотребления, խեղաթիւրում, эпитетный этикетъ, ամբարշտական սովորություններ, народный организмъ, ժողովրդական գործարաններ, не свозятся, չեն նպաստում, разсудочный, պատճառասեր և այլն:

Բացի այդ պ. Քարամանը—1) չը գիտէ ուսուցիչ բայերի խոնարհումը եւ շարունակ խոնարհում է անցնել կատարելաբար անկատարի հետ, օրինակ, вытѣсняла, դուրս վնդռել, усиливало, աճեց, доказывали, ապացուցեցին, напущали, քանդեց, եւ, բնդհակառակը, вѣштался, խառնուում էր. осудилъ, դատապարտում էր եւ այլն. 2) չէ հասկանում լատիկացույցի եւ լատիկացիայի յարաբերությունը, ուստի եւ թարգմանում է—«въ исторіи его литературнаго языка и національнаго сознанія»—«...նրա գրական լեզուի պատմության եւ ազգային գիտակցության մէջ (եր. 20), կամ թէ,—«высказываются вѣчныя стремленія и недоумѣнія души человѣческой»—«արտայայտուում են յանդիմանական ձգտումներն (նւմ) եւ մարդկային հոգու տարակուսանքները» (եր. 91), եւ 3) չը գիտէ, որ ուսուցիչները երկու կէտը (:): ցոյց է տալիս, որ նրանից յետոյ գալիս է բացատրություն կամ թուում, եւ երկու կէտի տեղ միտ դնում է ստորակէտ, որ յաճախ անհասկանալի է դարձնում նախադասությունը:

Աւելացրէք դրա վրա եւ հետեւեալը. 1) որ Քարաման «սպառնություն» բառի տեղ գրել է միշտ գործ է ածում «ազդեցություն» բառը, «կրիւ» բառի տեղ «մրցում», «ներքակալություն» տեղ «բանտարկություն», «պատերազմական» տեղ «պատերազմական» տեղ «զինուորական», «կարեւոր» տեղ «նշանակալից» կամ «գլխավոր», «նշանակալից» տեղ «տեսակետով» եւ այլն:

2) որ նա օտար բառերը հայացնելու նպատակով թողնում է լատինական ձեւը եւ ընդունում է ֆրանսիականը, բայց ֆրանսերէն չիմանալով գրում է սանսկրիտով, բառի ծագումը եւ այլն, մինչդեռ ֆրանսերէն պէտք է նշել իսկ եւ ոչ ի զմ, կամ թողնելով անգլիական ձեւը, օրինակ՝ չարտիստ, գրում է՝ քարտիստական, սատանան գիտէ թէ ինչ նիւան վրա: 3) որ նա յաճախ գործ է ածում «ճառաքաղական» բառը ու ձեւեր, օրինակ, երկից, ամենեցուն, երկուց Սիկիլիայից, վեցասաներորդ, հնգասաներորդ, Ռուսիոյ, տեղույս, ուստի (օրտեղից) եւ այլն:

4) որ նա աշխատում է հայացնել բոլոր բառերը, օրինակ օղակ, գերակայ, парламентарная олигархія, խորհրդարանական սուղիչխանություն, генераль-майоры, զօրադուխներ, реформація, բարենորոգություն, конвентъ, համախմբություն կամ համագումար, канцлеръ,

ըրի մէջ), երկաթի արջապա (железный купоросъ—15 մաս 100 մաս ըրի մէջ):

Այս գեղերով կարելի է ակադեմիկոս սենեակը եւ միջի իրեղենները: Կարծախի համար եւս պէտք է գործածել կարբոնիս թթու:

Կայ մի զորեղ աղետահանիչ միջոց, որը կարելի է միայն գործածել բժշկի ցուցմունքով, դա սուլեման է:

Հիւանդի հագուստը, հիւանդության միջոցին փոխած սպիտակեղէնը պէտք է մի առանձին տեղ (լաւ է կարբոնիս թթուի մէջ) պահել եւ երկու կողմից, կամ արջապայի ջրի, կամ գոնէ հասարակ ջրի մէջ մի քանի ժամ շարունակ, այսպիսով կախաճանալի կարելի է եռցնել տալ նոյնպէս հիւանդի գործածած ավանները, բաժակները, դանակ-պատառաքաղը եւ այլն:

Ինչ վերաբերում է անկողնին, ամենից ապահով կը լինի այնքալ նրան: Բայց ամենքը չեն կարող այդ անել, հետեւաբար պէտք է այդ էլ ակադեմիկոս, քանդելով ու կտոր-կտոր եղանակով մի քանի ժամ կարբոնիս թթուի կամ սուլեմայի մէջ:

Ունեւորները մասին չեմ խօսի, նրանք միջոց ունեն բժշկի խորհրդին դիմելու: Կասեմը միայն, որ նրանք պէտք է փոխեն սենեակի պատառը, նոր ներկել տան առաստաղը եւ յատակը, բոլոր կարասիները փոխեն, իսկ հիւանդի շորեղէնը, անկողնի պարտաւոր են ուղղակի այրել:

Մի երկու խօսք եւս:

նախարարակետ, буржуазія, միջակորեար, фантастическія пьесы, երեւակայական հատուածներ, бюрократизмъ, դիւանակալություն, конгрегация, եղբայրակցություն, ультра-роялисты, անդր-արքայականներ, протекціонизмъ, վաճառականականություն եւ այլն:

5) որ նա դաստարոտ է բառերը նախադասության մէջ ամենատարօրինակ կերպով օրինակ.

«Կիսովիւն ամենագործիւն առաջ երկրպագութեան, լուսաւորող առաքելութեան զուտ զեւթակցութեան, լուսող եւ բարոյ լուսեմանի ուրախ վառարկութեան տեղի էին տալիս վերահաս չեղափոխութեան նախազգացութեան, տիրող կարգ ու կանոնի դեմ առեւթակցել, տեսական մտքի արհամարհանքի առաջ, որը չէր հասցնում անմիջական գործական հետեւեցնելի:

Այսպէս է ահա հասկանում ոճի «կանոնաւորություն» ու սահունությունը» (տես «Յառաջաբան») հայկաբան պ. Քարաման:

6) որ հայերէն թարգմանությունը պարունակում է որ մէջ միայն 6—7 ոտորմիջ երեւանի հայոց պատմության վերաբերեալ, մինչդեռ գրքի երեւելի տպւած է «Հայոց պատմության յաւելուածով ճոխացրեց Ն. Քարաման»:

Եւ 7). որ այն, ինչ որ պակաս է թողել թարգմանիչը, լրացրել է օրագրիչը իր անթիւ վերլուծութեամբ եւ բաց թողած բառերով ու նախադասություններով:

Աւելացրէք այդ բոլորը եւ դուք կը համաձայնեցէք մեզ հետ, որ դա պատմության դասագիրք չէ, այլ մի կատարեալ խայտառակություն:

Եւ սակայն այդ գիրքը թարգմանված է Կաթողիկոսի հրամանով ու մեր պահպանողական կուսակցության կուսակցներից մէկի ձեռքով եւ հրատարակված է պ. Առ. Մատուրեանի միջոցներով: Մենք արդէն առիթ ունեցել ենք նկատելու, այժմ էլ կրկնում ենք, որ հայերի մէջ չը կայ լայն գիտար բան, քան հովանաւոր եւ հրատարակիչ գտնել կարգին գրքի համար, եւ աւելի հեշտ բան, քան հովանաւոր եւ հրատարակիչ գտնել անպէտք գրքի համար:

Տ. Յ.

Նոր ստացված հրատարակություններ.—1) Ս. Շահապետեան. «Յիշատակներ Վարդանանց տոհմի առիթով». 65 էր. գինը 75 Կ. Մոսկվա 1901 թ. 2) «1901 ընդարձակ ազգային օրացույց» 446 էր. գինը 10 դրոշ. Կ. Պոլս. 3) «Յուդայի հայերէն ձեռագրագրական վարկարարի ի պարթև». կաղ. 4. Յ. Ստանան, 37 մեծապրի երես, Վիեննա 1900 թ. 4) Г. М. Тумановъ, «Характеристики и воспоминания», 207, стр., Կ. 50 Կ. Тифлисъ 1901.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Դեկտեմբերի 12-ին

Գանձակի քաղաքային ինքնավարությունը առաջիկայ 1901 թվին մտնում է իր գոյութեան երկրորդ քառամյակի մէջ: Այս ամսի վերջին երկու նշանակված են ձայնաւորների ընտրություններ, որոնց համար նախապատրաստություններ սակայն չեն նկատվում:

Մեր քաղաքում հասարակական կեանքի արտայայտությունները եւ ընդհանրական շահերով

Թիֆլիսում գոյութեւն ունի ակադեմիկոս մի ամբողջ հիմնարկություն (дезинфекционная камера) քաղաքի հիմնած, որը բժշկի ու ֆեղիչների միջոցով կատարում է ակադեմիկոսությունը ձրի ապէս ամեն վարակիչ զէպտումս: Քաղաքի հասարակությունը մինչեւ այժմ խորթ է վերաբերվում այս գեղեցիկ հիմնարկությանը ու իրան ատելի գեղեցիկեցիկայից ազատ մնալու համար ծածկում է քաղաքային բժիշկներից իր երեխաների հիւանդությունը: Այս էլ ապիտուկեան մի նշան:

Մի ուրիշ ցուցակի երեւոյթ էլ այն է, որ նոյն իսկ աղքատ ծնողները աւելի լաւ են համարում իրանց երեխաներին տանը պահել, միւսներին էլ վարակել ու հիւանդել էլ առանց խնամքի թողնել, քան տանել նրան պառկեցնել նոր հիմնած գեղեցիկ հիւանդությունների բուժարանում է վարակել հիւանդությունների բուժարաններ» եւ որը նոյնպէս հիմնել է քաղաքը հէնց վարակիչ հիւանդությունն ստացող մանուկները համար:

Քաղաքը ահադին ծախսեր է անում ժողովրդի համար, իսկ սա քաղաքային յամառությունը յետ է մղում իրան օգնող ձեռքը:

Բժշկապետ Վ. Արծրունի

Կ Ր Ն Ը

(Հնդկական առասպել)

Այն ժամանակն էր, երբ Տուաչարին (հնդկական առասպել) ստեղծեց աշխարհը: Նա արդէն

հետաքրքրվելու ձգտումները այնչափ միկրոսկոպիական են, որ հասարակ աշխարհով նկատելի մի կերպ չէ կարելի իսկ մեզ պէս հասարակ մահկանացուն նոյն իսկ խոշորացույցով ոչինչ չէ կարող նկատել: Այդ բանը գուցէ աջողվի խոշորացույցային հետազոտությունների այնպիսի բազմաձևութեամբ մասնագէտին, ինչպիսին է Ռոբերտ Կոլը, այն էլ մեծ դժուարություններով ինձ թուում է, որ նա վերջ է վերջոյ կը խոստովանի, որ Գանգէսի դարաւոր ճանհններում նրան անհամեմատ աւելի հեշտ էր գտնել խօսքային ու ժանտախտի բացիները, քան էլ վարակական լուսով, ռետինի անիւներով, փետրաւոր չիւսպաններով եւ այլ մօղային խայտաբղետ արուղադարձով պնդվող Գանձակում հասարակական կեանքի նշույնները... Ձը գիտեմ, գուցէ յարգելի պիտեանկան, առանց խոշորացույցի օգնութեան դիմելու, հասարակական կեանքի արտայայտություն համարէ մի այսպիսի բնորոշ երեւոյթ, որը առօրեայ ու սովորական է մեր քաղաքում:

Եթեղ կանաւորված ու լոյսի առատ ու անսպասելի շողերով ալեկոծվող դահլիճում բացված են 4—5 հատ կանաչ սեղաններ. նրանց շուրջը բոլորված են «բանջուկի» ու «բակկաբայի» քնքշու ու ոչ-քնքշու սիրահարները. առաջինները, խօսելով ըստ Պատկանեանի, սեւաշեւ, սեւահեր, գեղածիծաղ ու դեշտարաւ, վարդագոյն ու ծաղկաթիթի, ինչպէս մայիսեան չքնաղ առաւօտը, իսկ երկրորդները, ըստ Սորենացու, գեղապատշաճ ու վայելչակալ, քաղաքացուր ու խայտալի, քաղերին ու դիւցազներին վայել արիւթեամբ ընդդիմադրում են ամեն մի հոսանքի, որից բարոյականութեւն ու հասարակական պարտաճանաչութիւն ասվող բաների հոտն է փչում: Նրանք Բաղուս գտնվող «Իդէալների գերեզման» անուն կրող համարահալ աղիթներական ընկերութեան Գանձակի ճիւղի վարչութեան անդամներն են, հետեւաբար եւ մեծ դիրք ունեն հասարակութեան մէջ: Թղթերը ձեռքից ձեռք են անցնում. մի քանի րօպէում մի քանի տասնեակներ, գուցէ եւ հարիւրների չըմանադաճություն է կատարվում սեղանների շուրջը: Կանաչ մահուդի վրա փայլում է այն յաւիտեանկան կախարդը, որի անունն է ոսկի ու որի սիրուն նուիրված են այնքան ուժգին ու ինքնանախ բարակալող արտեր: Քնքշու պարտաների կենտրոնական երևանքի վրա փայլում են սքանչելի սեւորակ աչերը ու նազելի սիրարորոք ժպիտները, որոնք կարծես կեանքի մի-մի նորմաւոր արշալոյսներ լինեն, որոնք 20-երորդ դարի հէնց առաջին օրերից սկսած պէտք է մարդկանց բարձրացնեն դէպի եթերային տարածութեան այն կէտերը, որոնց հասնում են նաւթային ֆօնտանների բարեբեր ու սքանչելագործ սիւնակները միայն:

Ամենուրեք ետում է կեանքը, եւ նրան յանդգնում են հասարակական շանուանել: Մի-միայն «գանգի մոսթիկներ» են ընդունակ այդպիսի կեանքի հրաշալիքները չըմոտնել ու նրա բարձր հասարակական նշանակությունը, նրա կուլտուրական, խաւար մասսաները դաստիարակողը:

Վերջապէս էր աշխարհի ստեղծագործությունը, մնում էր ստեղծել միայն կնոջը:

Բայց յանկարծ նա նկատեց, որ իր ձեռքում եղած նիւթի վերջին մասնորոգ գործադրել է մարդու վրա: Եւ նա մտածունքի մէջ ընկաւ,—արդեօք ինչից ստեղծել կնոջը:

Երկար մտածելուց յետոյ, նա նորից ձեռնարկեց իր գործին: Նա վերցրեց լուսնի կլորությունը, ձի գալարուածքը, խոտի թրթռալը, եղեգնի վայելչակալը հասակը, ծաղիկ փրփրումը, տերեւների փափկությունը, այծեամբ հայեալքը. ժպտող արեւի ճառագայթը, ամպերի արցունքը, հողմի փոփոխությունը, ձագարի համեստությունը, փետուրի ընջուկները, ազամանդի կարծրությունը, մեղրի քաղցրությունը, ձիւնի սառնոցող ցայտությունը, կաշաղակի շատախոսությունը եւ այս բոլորը ի մի խառնեց: Դրանից ստեղծեց մի գեղեցիկ կին, փրչեց նրան կենդանի շունչ եւ ընծայեց մարդուն:

Անցաւ մի շաբաթ, եւ ահա մարդը գալիս է Աստուծու մօտ եւ աղաչում է.

—Առ ինձանից ջո ստեղծածին. նա իր շատախոս լեզուով թունաւորում է իմ կեանքը, ամեն մի ճնշին բանի համար նազ է անում եւ միշտ հիւանդ է... Աստուծաւ իմ, առ ինձանից ջո ստեղծած կինը, ես չեմ կարող նրա հետ միասին ապրել:

Եւ Տուաչարին կատարեց մարդու կամքը ու յետ վերցրեց իր վերջին արարածին:

Անցաւ էլի մի շաբաթ եւ մարդը նորից եկաւ Տուաչարի մօտ, եւ ասում է.

րակող ու կոպիտ բարեբեր ազնուացնող դերը սուրանալ ու դիտմամբ գանց առնել...

Ասացի, որ մեր քաղաքային ընտրությունները համար նախապատրաստություններ, այսպէս ասած, ընտրողական պայքար, ագիտացիա, որոնք սովորական, շատ բնական ու անհրաժեշտ բաներ են համարվում նոյն իսկ մի որ եւ է խղճուկ Չովդառում, երբ այնտեղ սպասվում է տանուէրի, դատաւորների ու գործի ընտրություն, մեզ մօտ այժմ չեն նշուկատվում իսպառ, նրանք դեռ եւս անօգուտ ու օտարոտի բաներ են համարվում, որոնք կարող են դուր տեղը կանաչ սեղանից գցել, կամ «Չէնդալեւտայի», այսինքն սրբազան գրքի, դուքանի հաշիւատետների էջերը գնելու ու նրան անվերջ անգամ թերթելու բաւականութիւնից զրկել: Գուցէ ես սխալվում եմ, գուցէ մի որ եւ է մոլորակի վրա տիեզերային անհուն տարածություն մէջ կատաղի պայքար, ետանդուն նախապատրաստություններ են կատարվում Գանձակի քաղաքային ընտրությունները համար: Այդ բանը կարելի է ճիշդ կասնալ, դիմելով հոգեկաւոր տիեզերագէտ Կոմիլ Ֆրամարոնին, որին գուցէ աջողվի իր տիեզերական օգնությունը մի որոշ բան իմանալ ու յայտնել մեզ, գտնել այն հեռաւոր մոլորակը, որի վրա մարդիկ խորհում, յուզվում, մարտնչում ու տանջվում են Գանձակի ազգաբնակչութեան բարօրութեան համար...

Էդ պայքար-մայքարը ինչի է պէտք.—ասում է գանձակցի ընտրողը,—էնա նշանակած օրը սուս ու փուս կը գնանք ընտրություններ կաննեք էլի, որը իր խնամքին ձայն կը տայ, որը իր քեռուն կամ հօրեղորդը, իր աննորջը կամ քննակալին ու դրանով էլ բանը կը վերջանայ: Եթէ մենք սարսաղվեցն ու էդ հասարակական գործերով ձեր ասած կերպով զբաղվեմք, այն ժամանակ մենք բանից-գործից կընկնեմք, մենք հացի կարօտ կը մնանք. չը լինի, ուղում էք մեզ յայտնի թափառալը ինչ անուանանք: Չունամ Մաթթի օրին հասցնել, ինչ է. չէ, մենք դեռ այնչափ մեր խեղճները չենք կորցրել, որ ձեզպէսներին լսելով մեր ձեռքերով մեր տները քանդենք: Փող ու միմիայն փող պէտք է կանաչի ամեն բանից. ինչ բանում փող չը կայ, նրա վրա թէր ու անցկաց, ժամանակը մի այնպիսի ժամանակ է, որ փողի համար պէտք է նոյն իսկ շուն մաշկի, իսկ դուք ուղում էք դատարկ բաներով մեզ մեր աշխատանքից ու ապրուստից հեռացնել...

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, փետրվարի 23-ին, Միտի մայր եկեղեցում, վրաց ազնականութեան նախաձեռնությամբ, հոգեհանգիստ կատարվեց վրաց վերջին թագաւոր Գէօրգի XII-ի համար, նրա մահվան հարիւրամյակի առիթով: Հոգեհանգիստը կատարեց Վրաստանի էկզարխ Յուսիպի: Ներկայ էին կառավարչական իշխան Գոլիցին, գեներալներ, նախագահներ, Թիֆլիս-

—Այն օրից, երբ ես զրկվեցի կնոջից, ինձ կատարելապէս մնեակ եմ գգում: Միշտ յիշում եմ, թէ ինչպէս նա երգում եւ պարում էր իմ առաջ, ինչպիսի քնքշու հայեացքով փաղաքում էր ինձ, ինչպէս նա գրկում էր ինձ... Տուր ինձ ջո ստեղծած կինը, ես չեմ կարող առանց նրան ապրել:

Տուաչարին կատարեց նրա խնդրերը: Անցաւ միայն երեք օր, եւ ահա մարդը նորից տխուր, տրտում գալիս է նրա մօտ եւ ասում.

—Ձը գիտեմ ինչու, բայց թուում է, որ բնկերունիս ինձ աւելի վշտացնում է, քան դուարձությունը պատճառում: Ուստի խնդրում եմ, ով ամենակարող Տուաչարի, յետ վերցրու նշան...

Այս անգամ ստեղծողը բարկացաւ.

—Հեռացի ինձանից, ով մարդ, ասաց նա, եւ արա ինչ որ կուզես:

—Բայց ես նրա հետ չեմ կարողանում ապրել, ասաց մարդը:

—Իսկ չէ որ, առարկեց Տուաչարին, դու առանց նրան էլ չես կարող ապրել:

Եւ մարդը հեռացաւ վերաւորված եւ արտաստալից աչքերով:

Նա միշտ ասում էր.

—Աւաղ, ես չեմ կարող ապրել կնոջ հետ եւ ոչ էլ առանց նրան:

Թարգ. Վ. Տ.—Սուաչարեան

սի եւ Երեւանի քաղաքագլուխները եւ այլ բարձրաստիճան անձինքը։

Այսօր, ուրբաթ, դեկտեմբերի 29-ին, նշառակով Եւրոպայի քաղաքացիական իրաւունքների պաշտպանութեան Եւրոպայի Կոմիտէի նիստը, որ պէտք է տեղի ունենայ Թիֆլիսի համաժողովարանում։

Նրբէկ, դեկտեմբերի 28-ին, ցերեկը, արեւունակաւ թատրոնում մանկական տուն էր։ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան հաշուով պահվող բոլոր դպրոցների աշակերտների համար արվել էր օգնականներ ներկայացում։ Թատրոնը ծայրէ ծայր լինել էր, երեխաների այդ անապատ քանդակները ցոյց էր տալիս, թէ Թիֆլիս քաղաքը որքան մեծ ջանքեր է անում ժողովրդի մէջ տարրական ուսում տալու համար։ Մանկական տունը շատ գեղեցիկ անցաւ։ Ներկայ էին կառավարչության իշխան Գոլիցին, Թիֆլիսի համադպրոցական եւ այլ բարձրաստիճան անձինքը։ Ցանկալի է, որ քաղաքային վարչութիւնը աւելի յաճախ յիշէ իր խնամքով կրթվող երեխաներին եւ այսպիսի տոները շուտ շուտ կրկնվեն։

Մեզ հաղորդում են, որ վերջին օրերի ցրտերի պատճառով Թիֆլիսի չքաւոր դասակարգը նեղութեան մէջ է։ Մանկանոց ծանր է հիւանդների դրութիւնը, որոնց թիւը այս տարի համեմատաբար շատ է։

Խմբագրութեան շնորհակալութեամբ ստացաւ եկող 1901 թ-ի երկու օրացոյց, որ ուղարկված է մեզ Ամենայն հայոց Կաթողիկոսի կարգադրութեամբ առաջիկայ նոր տարվայ տօնի առթիւով։

«Մշակի» ներկայ համարի հետ ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին «Մուրճ» ամսագրի յայտարարութիւնը։

Վրաց ազնուականների թատրոնին կարծես վիճակված է միշտ պատահարների ենթարկվել։ Նրեկ, կրկնական ժամանակ, ծառայողներից մէկը անգլիկոսութեամբ լամպը շուռ է տալիս եւ սկսում է հրդեհ թատրոնում, բայց շուտով կարողանում են հանգցնել կրակը։ Այդուհետ են միայն մի քանի օթեակներ։ Այդ հանգամանքը արգելք չէ դարձաւ ներկայացումների շարունակման եւ երէկ երեկոյան եւ եթ կայացաւ սովորական ներկայացումը։

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից։ «Այսօր, դեկտեմբերի 22-ին, կառավարիչ սենատում քննվեցին երկու գործեր։ «Норвежское» ամսագրի հրատարակիչ Սեմսոնով 80,000 ռուբլու պահանջ յայտնեց այն չորս միլիտարներից, որոնց որոշմամբ դադարեցրած է բոլորովին ամսագրի հրատարակութիւնը, այն հիման վրա, որ օրէնքի զօրութեամբ պարբերական հրատարակութիւնը չէ կարող դադարեցնել ամսագրի օրոշման թիւով նախագահ շարունակելու։ Պատասխանատու անձերի ներկայացրած բացատրութիւններից պարզվեց, որ այդ որոշումը արժանացել է Բարձրագոյն հաւանութեան։ Այդ պատճառով պահանջատէր խնդրեց սենատին չը քննադատել պահանջը, այլ ներկայացրեց 416 ռուբլու նոր պահանջ նոյն միլիտարներից, իբրեւ վարձատրութիւն այն ծախքերի, որ ունեցել է հրատարակիչը առաջին պահանջը յայտնելիս, որովհետեւ նրան ժամանակին չէ յայտնված Բարձրագոյն հաւանութեան մասին։ Սենատը մերժեց Սեմսոնովի պահանջը։ Երկրորդ գործը վերաբերում էր պ. Կուլմենկոյի պահանջին մասնուր գործերի գլխավոր վարչութեան նախկին կառավարիչ Սոյնիովից, որից Կուլմենկո պահանջում էր 2,011 ռուբլի իբրեւ վարձատրութիւն այն վնասների, որ նա ունեցել է Սոյնիովի ծառայական անկանոց գործողութիւնների պատճառով։ Սենատի աւագ-պրօկուրօրը կարծիք յայտնեց, որ պէտք է բաւարարութիւն տալ Կուլմենկոյի պահանջին, բայց սենատը մերժեց պահանջը։

Կառավարութեան ակցիզային եկամուտները եկող տարվայ համար հաշւած են մօտ 463 միլիօն, այն է՝ խմբիցներից—326 միլիօնից աւելի, ծխախոտից—41 միլիօնից աւելի, շաքարից—62 միլիօնից աւելի, նաւթից—26 միլիօնից աւելի եւ լուցկիից—մօտ 7 միլիօն ռուբլի։

Յինանսների միլիտարութեան մէջ մշակվում է մի նոր նախագիծ այն անշարժ կայ-

քերից վերցվող հարկի մասին, որոնք ձեռքից ձեռք են անցնում առանց վճարի ենթարկվում է աւելի ճիշդ գնահատութեան ենթարկել այդ կաշառածները եւ աւելացնել հարկի չափը։ Բայց դրանից ենթադրվում է արագացնել այդ հարկին վերաբերող գործերի ընթացքը։

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 24-ին, Թիֆլիսի թեմի առաջնորդ Գեորգ. արքեպիսկոպոսի ձեռքով օծվեց տեղիս նորակառույց ս. Փրկիչ եկեղեցին. հողեւոր հանդէսը սկսվեց ժամի 9½-ին։ Պատարագիչը եպիսկոպոսն էր, երգում էր սիրողներից կազմված միաձայն երգչիկ խումբը, պ. Ս. ձգմանձանի ղեկավարութեամբ։ Ներկայ էին հանդիսին քաղաքիս բարձրաստիճան պաշտօնեաները եւ միւս ազգութիւնների հողեւոր ներկայացուցիչները։ Հանդէսից յետոյ, որ վերջացաւ ժամը 12-ին, առաջնորդը գնաց իր օթեւանը, «Երեւոյն» հիւրանոցը, ուր հասարակութեան կողմից ի պատիւ նրան ձաշ արվեց»։

ԿԱՌՄԻՑ մեզ գրում են. «Բաղադրում տարածված է ինֆլուէնցա հիւանդութիւնը. տունը չը կայ, որ հիւանդ չը լինի։ Հիւանդութիւնը շատ թեթեւ է անցնում, երկու-երեք օրից աւել չէ տևում»։

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 20-ին, ժողովարանի դահլիճում, այստեղ գընալով դերասանները սիրողների մասնակցութեամբ տուեցին երկրորդ եւ վերջին ներկայացումը. այս անգամ ներկայացրին «Ջորի» փոխարէն զոն» պիեսան։ Ներկայացման սկզբին եւ վերջը, պարոն նկարիչ Նահապետեանի չը նորհիւ, արվեցին կենդանի պատկերներ, որոնք հիմաւայի ազատութիւն թողեցին հասարակութեան վրա։ Մեր ժողովարանի անդամներից մի քանիս, թոյլ էին տուել իրանց ներկայացման ժամանակ առանց տոմսակի ներս մտնելու։ Խորհուրդը կը տայինք այդ պարոններին, որ չը խնայեին իրանց մի քանի կօպէկները յօգուտ հայ բեմին»։

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Պատուաւոր հաշտարար դատաւոր, Ղուբայի խոշոր կալուածատէր եւ հարուստ Ն. Կօլբուրդը ընկել է քրեական մի յանցանքի մէջ։ Կօլբուրդի կալուածքում ծառայելիս է եղել աշխատանքի պաշտօնով Հուսարի մի բնակիչ Ալեքսանդր Կիրիլով։ Այդ դժբաղդը հիւանդանոց է յունկալիս տեղիով եւ գնում է Կօլբուրդի տան վերեւի յարկը, վերցնում է կօմօղի մի սրտակ եւ կարծիքով, թէ նրա մէջ եղածը քննա է, մի գալ ու կէս այդ դեղից կուլ է տալիս պապիրոսի թղթի մէջ։ Բայց ընդունածը լինում է «ստրիկին» թոյնը։ Ողորմելի փշուռ է հողից երեք ու կէս ժամ չարաշար տանջանքներից յետոյ Կիրիլովի յանկարծակի մահվան մասին ինքը պ. Կօլբուրդն է յայտնում պօլիցիական պրեստաւին եւ բժիշկներին։ Դործը օրինական ընթացք է ընդունում, Կօլբուրդը մեղադրվում է արգելված թոյն պահելու համար, որոնք, պ. Կօլբուրդ, իր դրամը բացատրութիւնների մէջ յայտնում է, թէ իսկապէս Կիրիլովի ընդունած դեղը եղել է «ստրիկին», որը իրան տուել է հիւնդ տարի առաջ անյայտ մի մարդ եւ այդ թոյնը Կօլբուրդը գործ է անել գալիս, աղուէս ներս սպանելու համար, որոնք երեւացել էին նրա կալուածքում։ Դեկտեմբերի 20-ին Դիւիլի հայտարար դատաւորը այդ գործը քննում էր։ Թունաւորվածի մօր կողմից հրաւիրված էին փաստաբաններ՝ երդուեալ հաւատարմատաւրի օգնական Ն. Թաթնոսեան եւ Մ. Սալամբէգեան, որոնք երկու հազար ռուբլի վնաս են պահանջում մեղադրվող Կօլբուրդից։ Բայց այդ գործը յետաձգվեց, որովհետեւ Կօլբուրդը բացակայ է»։

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 15-ին եւ 16-ին Ղուբայի դումայի զահլիճում ձայնաւորների ընտրութիւն եղաւ։ 288 տանտէրներից ներկայ էին ընտրութեանը մօտ ութնուսու մարդ։ Ընտրված են տասնեւհինգ ձայնաւորներ։ Ընտրութիւնները այս անգամ խառն ի խառն էին եւ անկանոն. ժողովականները ներս էին մտնում, դուրս էին գալիս, քուէ չէին գցում տուփերի մէջ։ Ցանկալի էր, որ ներկայումս ընտրվեին աւելի հասկացող եւ բանիմաց մարդիկ, քան անցեալ տարվայ ձայնաւորները, որոնք արձանագրութիւնները փողոցի փողոց էին չըկնցնում իմանալու համար իրանց միջի գրածները։ Խիստ հաւանական է, որ ընտրվի եւ հաստատվի այս անգամ քաղաքագլխի պաշտօնի մէջ պ. Սէրգէյ-Երէկ Աղա-

յանց, քանի որ սա աւելի դրագէտ է մնացածներից, հին պաշտօնավոր պօլիցիական է եւ գիտէ թուրքերէն ու պարսկերէն լեզուներով գրել կարողալ։

Բօրչալուի գաւառի ՇՆՈՂ գիւղից մեզ գրում են. «Պաշտային միները մեր գիւղի հանդերձր ընտրութեան արտերը հողին հաւասարեցրին։ Գիւղացիները պատրաստվում են մարդ աւարակել «միւսն հող» բերելու, որպէս զի դրանով մուկը ոչնչացնեն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍԱՆԻՑ

Թարբիզ, դեկտեմբերի 15-ին

Արդէն պարսից ծոմապահութիւնը սկսվեց, ի՞նչ է այս միամենայ ծոմապահութիւնը պարսիկ համար։ Ըստ երեւոյթին, ապաշխարութեան, զղջման, ողորմելու, իր ունեցածից խղճներին բաժին հանելու օրեր են, եւ հէնց այդ նպատակով էլ գրված է ծոմը։ Բայց դա դարձել է ձեւականութիւն՝ միջոցների դնալ, տան մէջ «թաղի» սարքել (քարոզիչ մօլլա հրաւիրելով, իր մօտիկ չըլնանով նրա օրտառուէ խօսքերն արտասուելից աչքերով լսել) եւ այլն։ Սակայն այս վարագոյրի տակ ծածկված են երկու ծայրայեղութիւններ. ծոմի ամբողջ ունեւորների համար քէֆի, զուարճութեան, խիղճներին համար թշուառութեան ժամանակ է։ Ունեւորը ամբողջ գիշերը շաղաւար ուտելով, խմելով, խաղալով, մի խօսքով՝ քէֆով անդիպանելուց յետոյ, արաշտիսին քնում է մինչեւ ժամի 1—2-ը, որից յետոյ մի քանի ժամ սպասելով՝ կրկնում է մի եւ նոյնը, իսկ չունեւորը աւելի խնդ է ապրում, քանի որ այս ամբողջ ընդհանրապէս ամեն բան—առուելապէս կենսական պիտոյքները թանգանում են, առեւտրորը մեծ ձառամբ դադարում է, բազարը շատ ուշ բացվելով, աշխատանքը աւելի նուազ է լինում։ Այդ է պատճառը, որ մուրացիկները այս ամսին աւելի բազմանում են։

Այս ամսին եւ մուհարրէմում (պէի ամիս) կանայք մի փոքր ազատութիւն են ձեռք բերում եւ մէջից գնալու պատրուակով ուր որ ուզում են գնում են։ Այս դէպքում այդ մարդն իր տիրական իրաւունքը կորցնում է, քանի որ կրօնական ծէսերին կնքը եւս պիտի մասնակցէ։ Անցեալ նամակումս մի սխալ է սպրդել, որ շտապում են ուղղել։ Գրել էի.—«Գիւղացիները մինչեւ այժմ 20—25 զոս տանելուց յետոյ (միայն հայերից, իսկ պարսիկներից դուրս չառ բազմակի),—պէտք է լինի՝ «20—25 զոս հայերից եւ պարսիկներից»։ Այն վախը թէ այդ հիւանդութիւնը կարող է սուր կերպարանք ըստանալ, փառք Աստուծու, չիբարգործվեց։ Հիւանդութիւնը կամայ-կտմայ թուրացաւ եւ այժմ վերջնաւոր վրա է։ Դրա տեղ յայտնվել է ինֆլուէնցան։ Շատ քիչ տուն կայ, որ ազատ լինի այդ հիւանդութիւնից։ Երէկ Ղալայի եւ Լիլաւայի եկեղեցիների բնակում մի-մի հասարակաց անտաղ արին՝ հիւանդութիւնների վերացնելու համար։ Մեր ժողովուրդը դեռ այդ հիւանդութիւնները Աստուծուց ուղարկած պատիժ է համարում եւ, մատաղներ մորթելով, Աստուծու աչքը կամենում է քաղցրացնել, որպէս զի հիւանդութիւնները հրաշքով վերացվին։ Նդանակը փոփոխական է, բայց ընդհանրապէս զարմանալիս է։ Մինչեւ այժմ դեռ ձիւն չենք ունեցել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԲԵՐ

Սիւի կաթողիկոսի ընտրութեան ձեւի առիթով Օրմանեան պատրիարքը հրաժարական ներկայացրեց սուլթանին, որը, սակայն, չընդունվեց։ Հրաժարականի պատճառն այն է, որ Սիւի կաթողիկոսի նոր ընտրողական ձեւի մէջ պատրիարքը հայոց եկեղեցու իրաւունքների խախտումն է տեսնում, այն իրաւունքների, որոնք նուիրագործված են նախորդ սուլթանների կողմից։ Այդպիսով Սիւի կաթողիկոսական աթոռը մինչեւ այժմ թափուր է մնում։ «Moniteur Oriental» լրագրի խօսքով, ամենայն հայտ կաթողիկոսը Օրմանեան պատրիարքին եւ Կ. Պօլսի կրօնական ժողովին ուղարկած իր կօնդակի մէջ այն միտքը յայտնեց, թէ անկողնեմութիւն է համարում այլ եւս յամադվել եւ խորհուրդ է տալիս զիջել Բ. Դրան պահանջներին։ Ի նկատի ունենալով այդ, Օրմանեան պատրիարքը հրաժանագրեց Երուսաղէմի միաբան Սահակ եպիսկոպոսին ներկայ լինել Սիւի կաթողիկոսի ընտրութեանը թիւրքաց կառավարութեան ներկայացուցչի ղեկավարութեամբ։

Տրանսվալանի նախկին պետական գործիչներից մէկը հաղորդում է «Neuen Hamb.

Zeitung» լրագրին հետեւեալ տեղեկութիւնները։ Կապի հօլանդացիների արամաթութեան եւ առհասարակ իրերի այժմեան դրութեան մասին հարաւային Աֆրիկայում «Երանից յետոյ, երբ Պրետորիան գրավեց, երբ հրատարակվեց, որ երկու հանրապետութիւնները արդէն նուաճված եւ միացված են Անգլիային, նրանից յետոյ, երբ Շաշին իբր թէ մեռաւ, Դէվէտ գերի առնվեց, իսկ Բոտա սպանվեց, նրանից յետոյ, երբ անգլիացիները ի լուր աշխարհի աւելանցին, թէ բօէրներից գերի են առնված 20,000, սպանված են 80,000, իսկ վերադարձված եւ հիւանդ են 50,000 հողի եւ այժմ բօէրական հանրապետութիւնների մէջ թափառում են միայն անշան աւաղակային խմբեր,—այս բոլորից յետոյ դուրս եկաւ, որ բօէրները 20,000 զինուորից բաղկացած մի նոր զօրք ունեն, որոնց կազմակերպված եւ սպասարկված հէնց նոյն մեռած եւ գերի առնված գեներալների միջոցով։ Պատեւազմի բոլոր զստերը իրանց օգուտը տուին բօէրներին։ Զօրքի մէջ մտցրած է այնպիսի կազմակերպութիւն, որ պատիւ կարող է բերել ամեն մի եւրոպական պետութեան։ Եւ այն ժամանակ, երբ բոլոր բօէրները վճողաբար յայտնեցին, թէ պատրաստ են կուրել մինչեւ արեւան վերջին կաթիլը, նախագահ Շաշին անխնայ աշխատում էր զարթեցնել կապի հօլանդացիներին ազգային զգայունքը։ Այս աշխատութեան հետեւանքն այն եղաւ, որ ամենքը պատրաստակաւութեան յայտնեցին դէնք արձաբաց իրանց հին թշնամու դէմ։ Այս վճիռը արագութեամբ իրագործելուն նպաստեց այն հանգամանքը, որ անգլիացիները ծանր պատժների դատապարտեցին Կապի այն հօլանդացիներին, որոնք որ եւ է մասնակցութիւն էին ունեցել պատերազմի մէջ։ Հօլանդացիները տեսան, որ նրանք զործ ունեն մի անբիղծ եւ կոպիտ հակառակորդի հետ, որ ձգտում է միայն մի բանի—չնչել իսպառ մի ամբողջ ազգութիւն։ Սրան աւելացան եւ ամբողջ գնացեցիներ, ինչ որ բերով, կաղերով, երեխաներով, կանանցով, որոնց քաշ էին տալիս, որպէս գերիների, դէպի Կապի գաղթականութեան զանազան անկիւնները։ Ի՞նչ գեր կարող էին խաղալ պատեւազմի մէջ կուրացած ծերերը, դժբաղդ կաղերը, թշուառ խնդաղարները, անմեղ երեխաները եւ քաղցած կանայք։ Այսպիսի գնացեցիներով անգլիացիները մտադրութիւն ունէին սարսափ զցկել Կապի հօլանդացիների վրա, բայց Կապի հօլանդացիները չը զգացին ոչ երկիւղ եւ ոչ սարսափ։ Ընդհակառակը այս բոլոր անիրաւութիւնները լուրջ եւ հանդարտաբար հօլանդացիներին կայսրին կատարութեան եւ լրջրին նրանց սրտերը ամենախորին զգուհնեցով։ Նրանք համոզվեցին, որ անգլիացիները, Տրանսվալի եւ Օրմանեան հանրապետութեան բօէրներին ոչնչացնելուց յետոյ կը սկսեն նոյնպէս վարվել եւ Կապի հօլանդացիների հետ։ Բօէրների ազգային պատմութիւնը սովորեցրել է նրանց, որ Անգլիան խտրութիւն էլ գնում ոչ միջոցների եւ ոչ առիթների մէջ, երբ հարկաւոր է մէկուս նպատակ եւ ճնշել։ Հէնց այս պատճառով գաղթականութեան սահմաններից ներս խուժած բօէրների թիւը երեք օրվայ մէջ 600-ից հասաւ 6000-ի։ Ահա թէ ինչպիսիք է բօէրական զօրքի ամենա զաւորները, դադարեցրած այն ոյժի, որով բօէրները հնարաւորութեան կունենան շարունակելու պատերազմը Կապի չը կայ, որ կարճ ժամանակի մէջ բօէրների զօրքը այնքան կը բազմանայ, որքան բազմաթիւ երբեք չէ եղել նա, եւ պատերազմը կը ծանր իր նոր ընթացքի մէջ։ Բօէրների դրօշակի վրա այսուհետեւ դրված կը լինի ոչ միայն «Տրանսվալի» եւ Օրմանեան հանրապետութեան աղաւթութիւն եւ անկախութիւն», այլ «ազատութիւն եւ անկախութիւն հարաւային Աֆրիկայի բոլոր հօլանդացիների»։

Ինքնից հետագրում են «Рус. Вѣд.» լրագրին «Այստեղ չափազանց դժգոհ են «Times»-ի թղթակցի Պեկինից հաղորդած տեղեկութիւններից, որոնց մէջ ամենախիստ լեզւով քննադատվում է Վալդերիէի պատերազմ վարելու եղանակը եւ կարծիք է յայտնվում, որ եթէ խաղաղութիւն կնքելը յետաձգվի, Անգլիան պէտք է հրաժարվի իր զօրքերը այժմեան զլխաւոր հրամանատարին ենթարկելուց»։

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 դեկտեմբերի

Պեկին, ինչպէս արժանահաւատ աղբիւրից յայտնի է, Պեկինի ոռոսաց դեսպանը հաղորդեց արտաքին գործերի մինիստրին, թէ ոռոս վնական բանկի Պեկինի բաժանմունքը լաւ է կազմակերպել Թագաւոր Կայսրի անունից բրնձի բաշխումը Պեկինի աղքատ ազգաբնակչութեան մէջ։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց ցանկութիւն յայտնել, որ պաշարողէնի բաշխումը չարունակվի ամբողջ ձմեռվայ ընթացքում։ Պեկինի բաժանմունքը ամեն տեսակ ջանքեր է գործ դնում՝ ամենալաւ կերպով կատարելու ոռոսաց Թագաւորի կամը։ Ներկայումս պաշարեղէնը բաժանվում է Պեկինի չորս կէտերում՝ օրական տասը հազար բաժնից աւելի քանակութեամբ։

ԿՐԱՂՕԿ։ 150 մարդուց բաղկացած բօէրների զօրաբաժինը դեկտեմբերի 21-ի գիշերը քնչեց

տաւարը կրաւայից, որ պաշտպանութեամբ էր ետ-
մանքին կողմից, եթէ մըն հետաւորութեան
վրա կ'ընդունայ:

ՀԱՍԳԱՆ: Նախագահ Կրիստիան Կրիստիանս-
դորֆերը անգլան լաւ է, որ նա կատարե-
լապէս պէտք է առողջանայ մի քանի օրից
յետոյ: Բիւլլետէններ այլ եւս չեն հրատարակու-
ի. ՊՕԼԻՍ: Այստեղ նկատուած է ժամատախ-
տով հիւանդանալու գէպը, որ մահով է վեր-
ջացել: Սանիտարական խորհուրդը զգուշու-
թեան անհրաժեշտ միջոցներ է ձեռք առել:

ԿԱՇՏԱՆԻՍ: 50 վերստիւթիւն-կամաւոր-
ներէն բաղկացած զօրաբաժինը, որը շարաքի
օր արշաւեց այստեղից, գրաւեց Պիկանդակոֆ:
Կերակրի երկուշուրեան նա կուր բռնվեց բռնե-
րի զօրաբաժին առաջապահներին հետ. թշնամի-
յետ մղվեց եւ բանակ դրեց: Եւստիւս անցքի
միւս կողմը: Վերստիւթիւնները աշխատում
էին տիրել անցքը, իսկ բռնեքները աշխատում
էին վերստիւթիւններին ճանապարհը կտրել:
Վերստիւթիւններին աջակցեց գրաւել անցքը
եւ իրանց ձեռքում պահել: Երեք վերստիւթ-
իւնները սպանվեցին, 23 վերստիւթիւններ
նրանց թուով զօրաբաժին հրամանատարը:

ԿԱՇՏԱՆԻՍ: 25 հաստատուում այն տեղե-
կութիւնը, թէ վերստիւթիւն-կամաւորները
ընդհարում են ունեցել բռնեքների հետ:

Պէնիւն: Գերմանացիները երկու քուտ ու-
ղարկեցին Մին գիւնաւորայի գերեզմանների
մօտ գտնված տեղը, որտեղից հաղորդվեց
սկսված անկարգութիւնների մասին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Հաստատուում է, որ Լոնդոնի
ամէրիկական զեպանի եւ անգլիական արտա-
քին գործերի միւնիստրի, նոյնպէս Բերլինի ամէ-
րիկական զեպանի եւ պետական քարտուղար
Բիւտտօֆէնի միջեւ նորերս եղած խօսակցու-
թիւնները վերաբերում էին ամէրիկական առա-
ջարկութեանը: Բիւտտօֆէնը Պէնիւնից բանակցու-
թիւնները Ձինաստանի հետ՝ վարձատրութեան
եւ առեւտրական դաշնագրի վերաբերելու
վերաբերմամբ: Սակայն մի քանի օր կանցնի
մինչեւ որ ամէրիկական ներկայացուցիչները
կարողանան վերջնականապէս տեղեկացնել
իրանց կառավարութեանը՝ պետութիւնների
ունեցած հայեացքը այդ հարցի վրա:

Բերլին: Պրուսական պատգամաւորների ժո-
ղով մէջ Բիւլլով, որպէս միւնիստր-նախագահ,
ներկայացրեց բացատրութիւն, որի մէջ պըն-
դում էր անտեսական բոլոր ոյժերի փոխադարձ
ազդեցութեան անհրաժեշտութեան վրա եւ
չեքմ կերպով պաշտպանեց ջրանցքի օրինա-
գիծը, ծառայում է բոլորի շահերին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Մակ-Կինլէյ հիւանդացաւ
գրիպով, որը հնչտ է անցնում:

ԲԼՈՒՄԲԵՐԳ: Ասում են, որ այստեղ ազ-
դեցիկ անձինքներից կազմվում է խաղաղու-
թեան յանձնաժողով՝ Օրանսիան հանրապետու-
թեան հողի վրա Դէվիտին, Շտէյնին եւ ու-
րիչ հրամանատարներին գտնելու նպատակով,
որպէս զի կարելի լինի ծանօթացնել նրանց
կրօնները չըջարեակաւ մէջ պարունակվող
պայմանների հետ՝ բռնեքների յօտարկամ անձ-
նատուր լինելու վերաբերմամբ եւ աշխատելու
համոզել նրանց անձնատուր լինել:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱՆԻՍԻՍԻ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿԱՅ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՄՆԻԿԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե ն օ Ր, բ ա ջ ի կ ի ռ ա կ ի օ Ր Ե Ր Ի Յ:

Ա Ռ Ա Ռ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախագահից—11—12 ժ. վերաբերու-
թեան, վերստիւթիւն (սֆիւրիւ) եւ միջառնու. հիւանդ.

Կ. Մ. Ձիւղակիցի—9—10 ժ. աչքի, ներքին եւ
ներքինից:

Կ. Ս. Գրիվիլի—12—1 ժ. ակնաշի, քթի եւ կ-
կողմից:

Զ. Բ. Բարաբանեանց—11—12 ժ. կանանց եւ երե-
կայից հիւանդ.

Ս. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին եւ երե-
կայից:

Ե Ր Ե Կ Ո Ց Ն Ե Ր Ը

Բ. Յ. Պրոսպերից—5—6 ժ.

Ս. Ն. Եպիսկոպիցի—6—7 ժ. ներստիւթիւն (եղեկ-
արարութիւն), վիճակ եւ մորթի:

Գ. Ս. Թաւաթեան—7—8 ժ. ներքին եւ երե-
կայից:

Բ. Ա. Նախագահից—7—8 ժ.

Վար 50 կ. չքաղութիւնը ձրի ճամպորջի (կօն-
սիլիւն) եւ օպիստիւլի համար առանձին:

Օ. Տ. Առվակիսի—տանը, ծաղկահատ եւ բժշ-
կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերանորոգ.

Բժօկապիս ԵԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
ԳԵՈՐԳ ԹԱԴԵՈՍԵԱՆ
Ներքին եւ երկաթուղի հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւօ-
տեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օ-
րից) 5—7 ժ.: Վերստիւթիւն կ'առնէ, տ.
№ 24. (Ե. Ն. Ն.) 18—20

ՇԻՐՎԱՆԶԱԴԻ
„Ն Ա Մ Ո Ւ Ս“
Վէպը Ս. Սպարկովսկիի լոյս կը տեսնի յուն-
վարի վերջին: Դիմել: Баку Александру Аб-
ляну. Գինը ճանապարհածախով 1 րուբլի:
Գրականաւորներին զիջումն: 2—10

Շարունակվում է
Պ Ա Տ Ե Բ Ր Ա Ջ Ա Ր Դ
ԱՋԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

VII եւ VIII գրքերի
Բ ա ժ ա ն օ Ր Ղ ա զ Ր Ո Ւ Թ Ի Ն Ը

Երկու գրքի բաժանորդագրին է 3 րուբլի:
Կարելի է ստանալ նաեւ նախորդ գրքերը
բաժանորդագրական գնով:

Դիմել: Ерванду Лалаянцъ, Саперная 5
կամ Семинарія Нерсисянъ, Тифлисъ.
(Ե. ո.) 10—15

Մ Ե Ղ Ր

Վաճառվում է 25 կ. ֆուտը, Յ. Մէլք-Բախ-
տամանի խանութում, Սօրյակի փողոց, № 6.
6—6

Պետերբուրգի պարսից դեսպան Միքայիլ-Ռիզ-
խանի տանը, Գուբովիչի փողոցի վրա,

ՏՐՎՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ
ՎԱՐՁՈՎ

միջին եւ ներքին յարկերում, առաջինը տաս
սենտականից բաղկացած, երկրորդը՝ տասնմէկ:
Գին մասին դիմել Հաջի-Մամեդ-Բադր Բիզան-
վին, Սիմի փողոցի վրա, Ձիթախովի քարա-
վանաարայում: (Ե. հ. Ն.) 5—10

Գ Ր Ա Շ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
Վրաց Հրատարակչական ընկերութեան տպա-
րանում

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
հայերէն կարգով իմացող երեխաներից:
Դիմել նոյն տպարանում Ս. Նազարեանցին:

Большая-Ванская улица, домъ Мартирозова.

ՏԱԼԻՍ ԵՄ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ
Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի Ե Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

նաեւ գերմաներէնի

Հասցիս՝ Շ Ա Ն Թ
Фрейлинская 14, первый этажъ. 7—8

Պետերբուրգի բժշկական վարչութեան թուղ-
տութեամբ: Մեծ արկղիկը 5 րուբլի, փոք-
րը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:



ՄԱՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար,
ոչնչացնում է թեփը: Գուրս է եկել նաեւ
բոլորովին նոր միջոց

Ա Ռ Ւ Կ Ս Թ Ը

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տա-
լու համար, ոչնչացնում է արեւի պատճա-
ռած սեւութիւնը, մուկերը, տալիս է կա-
շտին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ
գինը շափաւոր են. մեծ արուակը, արկղի-
կի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ.

Սալվում են բոլոր պարֆումերական եւ
զեղաւաճառական խանութներում: Գլխա-
ւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում,
Պուշկինսկայ փողոց տ. № 15, բնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. թիֆլիսում կովկասեան զե-
ղատան ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում՝ Երևանեան հրապարակ
եւ նրա բաժանմունքում, Միքայիլի փո-
ղոց եւ Բազում. նաեւ Միքայիլեան կամուր-
ջի վրա, Պապովի եւ Արիստակովի զեղատ-
ներում: Օտարաքաղաքացիների պատուէր-
ները կատարվում են անմիջապէս՝ պատուով:
33—100

Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան
վարչութիւնը

արձուով յայտնում է. որ այս դեկտեմբեր ամսի 22-ին տեղի ունեցած անաշուղ աճուրդի պատ-
ճառով նշանակված է երկրորդ եւ վերջին աճուրդ այսօր, դեկտեմբերի 29-ին, ցերեկվայ ժամի
12-ին, հետեւեալ կառուածները վաճառելու համար, համաձայն այն յայտարարութիւնների,
որոնք զետեղված են այս տարվայ ընթացքում «Прав. Вѣстникъ»-ի № 259-ում եւ «Кав-
казъ»-ի № 308-ում:

№ 1585 Ձանկարաշվիլի, Ֆ. Դ.—Մի հողաբաժին, որի տարածութիւնն է 42 ջառ.
սաժէն, կամ որքան գուրս կը գայ իսկապէս, երեքարկանի անով 5-րդ քաղաքամասում,
Գրեպոյայի փողոցում: Պարտքը՝ 9126 ր. 39 կ., ապառիկ 390 ր. 88 կ.:

№ 2744 Ջանիկի վ. Ջ.—Մի հողաբաժին, որի տարածութիւնն է 80 ջառ. սաժէն,
երկարիկանի անով 7-րդ քաղաքամասում, Շիրակի փողոցում: Պարտքը՝ 2969 ր. 66 կ.,
ապառիկ 93 ր. 42 կապէկ:
1—1

Թիֆլիսի Նաքարդիւնարական ընկերութեան
վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն պ.պ. փայտէրերի, որ համաձայն ընկերութեան
բաժնետէրերի սոյն դեկտեմբերի 13-ին ներկայացրած յայտարարութեան նշանակվում է

Ա Ր Տ Ա Կ Ա Ր Գ Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Թ Ո Ղ Ո Վ
Դեկտեմբերի 31-ին, կիրակի օրը, ժամի 10-ին, քաղաքային խորհրդարանի դահլիճում:
Ջրաղման առարկաներն են 1) պ.պ. բաժնետէրերի յայտարարութեան ընթերցումը եւ
քննութիւնը 2) վարչութեան դեկտեմբեր ընկերութեան հաշիւները ներկայացնելու համար ժա-
մանակի որոշման մասին:
(Ե. Ն.—Ն.) 3—3

ԲՈԺՈԺԻ ՑԵԼՈՒԼԵԱՐՆԻ ՍԵՐՄ
Բաղդադի առաջնակարգ եւ սպիտակ տեսակ

Պարսկերեան դրութեանը պատրաստված
հ ս կ ո ղ ու թ ե ա մ ք

Մ Ի Հ Ր Ա Ն Ի Ս Ն Ժ Ե Ա Ն Ի
Առաջին կարգի վալեյալ մասնադէտ Պրուսայի Կայսերական Շերամապահական վարժարանէն:

Երկար տարինքէ ի վեր Թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուած
եւ ծանօթ ֆիրմա ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պ ա ս թ է օ Ր Ե ա ն
դ Ր Ո Ւ Թ Ե ա մ ք ընտրված Պաղտատի տեսակ սպիտակ հոշնտէրէն յատկապէս եւ մասնաւոր
խնամօք պատրաստել տուած, եւ որոնցմէ առաջին պարտիսն արդէն հասած եւ յանձնած ենք
Շերամապահական կայարանն քննութեան համար:

Ամեն անոնք՝ որք կը փափաքին դիւրամատելի գիներով լաւ ապրանք գնել եւ ապահով
ըլլալ հոշնտերու տեսակին վրա, թող հաճին դիմել մանրամասնութեանց համար Մայսուրաձէ
եւ Խոջափարտիւթով քարաւանաւորն № 16—17, Ե. Կ. ԱՐՍԷՆ եւ ընկ. գրասենեակը:
(Ե. հ. Ն.) 23—30

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1901 ГОДЪ НА ДВА ИЗДАНИЯ:
I.
Е Ж Е Д Н Е В Н А Я Г А З Е Т А

Н О В О С Т И Д Н Я

Съ портретами государственныхъ и общественныхъ дѣятелей.
ДЕВЯТНАДЦАТЫЙ ГОДЪ ИЗДАНИЯ.

Съ 1901 г. газета будетъ издаваться по расширенной программѣ.

Газета отводитъ на своихъ столбцахъ мѣсто всему выдающемуся въ русской и заграничной жизни,
отмѣчая событія въ возможной полнотѣ и въ яркой, живой и общедоступной формѣ.
Помимо обширной хроники, въ «Новостяхъ Дня» помѣщаются ежедневно многочисленные телеграф-
ныя сообщенія и корреспонденціи отъ собственныхъ корреспондентовъ изъ Петербурга, изъ провинціи
и крупнѣйшихъ заграничныхъ центровъ—изъ Парижа, Берлина, Лондона, Нью-Йорка и друг.

Подписная цѣна: на годъ—8 р. на шесть мѣсяцевъ—5 р., на три мѣсяца—3 р., на одинъ мѣсяць—1 р

II.
Е Ж Е Н Е Д Ъ Л Ы Й И Л Л Ю С Т Р И Р О В А Н Н Ы Й Ж У Р Н А Л Ъ
„С Е М Ъ Я“
ДЕВЯТИЙ ГОДЪ ИЗДАНИЯ

Несмотря на свою дешевизну, журналъ „Семья“ представляетъ собою вполне изысканное изданіе, въ
которомъ помѣщаются разнообразныя интересныя тексты, масса портретовъ (іерарховъ Православной
Церкви, государственныхъ и общественныхъ дѣятелей, представителей науки и искусства и т. п.) и ри-
сунковъ, относящихся къ злобѣ дня.
Подписная цѣна: на годъ съ доставкой 3 р. „Новости Дня“ и „Семья“ 10 р.—Адресъ: Москва,
Красныя ворота, с. д. 2—3

СЕКРЕТЬ КРАСОТЫ ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ А.СІУиКѢ МОСКВА. 20 коп. кув. M. 109486

Ս ա ր գ ի ս Վ. Ա ր ր ա ի ա լ ե ա ճ
Հասցէ. ՍՈԼՈՒԿ, Գանձակայեա փող. տ. Թամաշէլի, № 26, բն. № 9.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշ-
խաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարագմունք-
ներ գտնելու համար

Հ Ա Շ Ո Ւ Ս Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտե-
ական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ չոգե-
նաւային հաշուապահութիւն:

2) Առեւտրական թուարանութիւն:

3) Առեւտրական թղթակցութիւն:

4) Պարտաւորական օրէնքները:

5) Գնդագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ չրիֆաների եւ ուղ-
ղումն ամենապարզ ձեւերով:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԼԵԹԱՑԻՔ ՍԿՈՎԵԼՈՒ Է ՅՈՒՆԿԱՐԻ 15-ԻՑ
Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երե-
կոյան:
(Ե. ո. Ն.) 16—25